

## Տ. ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԱՐՍԵՆՅԱՆ
(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1986-1996 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի Վ. Ռշտունու անվան № 11 միջնակարգ դպրոցը:

1997-2002 թթ. սովորել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

2002-2003 թթ. ուսումնառությունը շարունակել է Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. հունիսից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է աշխատանքի «Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնում՝ որպես գործավար-քարտուղար:

2003 թ. դեկտեմբերից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում՝ որպես վերակացու:

2004 թ. մայիսից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռի Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2004 թ. հունվարին պաշտպանել է ավարտաճառ՝ «Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի հոգևոր-եկեղեցական գործունեությունը» թեմայով:

2005 թ. փետրվարի 3-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: